

հրեշտակախումբ տեսակօք տաճարացն¹, որք զտեսօղան իսկոյն ամեն յափշութիւն. զի ունի եւ զփեղեշի² մայր² գեր քան զիրանան, պսակեալ անու-

1 Բնութեան ամենէն զմայելի, ամենէն սիրուն մէկ կէտն է Ս. Կարապետը. կարծես յակինթ մըն է վայելչանիստ տափի մը վրայ՝ Բնութենէ շինուած ակնակապիճի մը մէջ: Ս. Կարապետ միայն մէկ եկեղեցի կամ տաճար մը չէ. քանի մը տաճարներ քով քովի կը կազմեն Սրբավայրերու խումբ մը: Բուն Եկեղեցին Հիւսիսէ Հարաւ կ'երկնայ Ս. Խաչ խորանով. այս եկեղեցւոյն սալալատակը Մամիկոնեանց դամբարան է. խորանին հարաւային կողմն է Ս. Կարապետի մատուռը, սիրուն մատուռ մը փոքրիկ դուռով: Ս. Կարապետի մատրան կցուած է Ս. Գեորգը, որ իբր աւանդատուն կը գործածուի Հիմայ: Ս. Խաչ խորանին հարաւային կողմը, Ս. Կարապետի մատրան համալսփ, Ս. Ստեփանոսի մատուռը աւելի ընդարձակ: Երկու մատուռներու խաչկաշներն ալ գեղարուեստական արտագրութիւններ են, Վանեցի Վարպետի մը եւ իր աշակերտին ձեռքէն ելած: Ս. Ստեփանոսի քով, Ս. Գեորգին համալսփ, եկեղեցի մըն ալ կայ Ս. Աստուածածին անունով, որ հարեւանցի շինուած է վերջին երկրաշարժէն ի վեր: Այսպէս Հինգ սրբավայրերէն երեքը միայն (Ս. Ստեփանոս, Ս. Կարապետ եւ կենդրոնական տաճարը) կաթողիկէ ունին, որ ճարտարապետական ընտիր Չանգակատան հետ, սպիտակ քարերով կառուցուած եկեղեցւոյ Աւագ զրան վրայ, կը կազմեն տեսքը «ահնիկէց հրեշտակախումբ» տաճարներուն՝ Կոլոտի բացատրութեամբ:

2 Բոլոր Հին աշխարհագիրներ ու պատմագիրներ անտառաշատ անտառախիտ կը նկարագրեն Մուշը. բայց Հիմայ այդպէս չէ. միայն Ս. Կարապետի չրջակայքը թաւուտք մըն է. այնքան գէշ գործածած են անտառները որ Հինաւուրց կաղնի կամ մայրի աչքի չգործեն: Ս. Կարապետի թաւուտքը ընդհանրապէս կաղնի (մէլէ) է, ետքը կու դայ կաղամխի: Ըստ ամենայնի, գեղեցիկ, ակնապարար է այս վիճակին մէջ ալ այն կանաչութիւնը, որ գարնան հետ կը կանգանացնէ Ս. Կարապետին սարերը: Բայց Կոլոտ գիւղիցի Մայր բացատրութեամբ՝ մայրիներէն աւելի կը հասկցնէ մայր էփեղեշի կամ Մայր Դոմարը, Լիբանանէն ալ գերազան, զոր մեր Արփիաւորիչը (= Լուսաւորիչը) լուսապաճոյճ թագի մը պէս շինած է Ս. Կարապետի վրայ: